



ԿՆՈՋ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅ ԻՐԱՎՈՒՆԲՈՒՄ

Ս. Ս. ՄԱՄՅԱՆ

Հայ իրավագիտության պատմության մեջ կնոջ իրավական պաշտպանության հարցը անհրաժեշտ չափով չի ուսումնասիրված, թեև առանձին աշխատություններում այս կամ այն չափով լուսարանված են որոշ խնդիրներ:

Հավակնություն չունենալով տալու առաջադրված հարցի ամբողջական ուսումնասիրությունը, այս հոդվածում քննարկում ենք կնոջ ազատության, կյանքի, առողջության, պատվի ու արժանապատվության պաշտպանության, ամուսնական և ընտանեկան հարաբերություններում նրա ստրկական գրության դեմ ուղղված իրավանորմերը:

Քաղաքական իրավական պաշտպանությունը

Ֆեոդալական կարգերում աշխատավոր մարդիկ առհասարակ զրկված էին քաղաքական իրավունքներից. նրանք ոչ միայն չէին կարող մասնակցություն ունենալ երկրի կառավարմանը, այլև պետական իրավունքի սուբյեկտ չէին և մեկուսացված էին պետական գործունեությունից: Պետական գործունեությունն աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների բացառիկ իրավունքն էր: Կանոնական իրավունքը դասային անհավասարության, տիրապետման ու ենթարկման հարաբերությունները մարմնավորող իրավունքն էր: Ստորին դասին պատկանող մարդիկ չէին կարող դրավել անգամ ամենացածր պետական պաշտոնը և մասնակցել իրավանորմերի ստեղծմանը: Դավիթ Ալավկա որդու ՀԱ կանոնը, ինչպես և Մխիթար Գոշի ու Սմբատ Սպարապետի Դատաստանադրքերը նույն տեսակետն են պաշտպանում՝ կինը չէր կարող քահանա լինել, զինվորական դառնալ, խաղողից գինի մզել, շուկայում առևտուր անել¹: Կինը ոչ միայն չէր կարող դատավոր լինել, այլև վկա կանչվել: Նույնիսկ այն դեպքում, երբ անանատեսները միայն կանայք էին և տղամարդ վկաներ չլինելու պատճառով դատարանը հարկադրված էր լինում հարցը լուծել կանանց ցուցմունքների հիման վրա, ապա վկա կանանց թիվը պիտի տղամարդ վկաների համեմատությամբ կրկնակի լիներ՝ չորս կամ վեց հոգի: Ընդ որում վկա կանայք դատարան չէին ներկայանում, այլ նրանց լսում էին տղամարդիկ՝ հավասար թվով, և նրանց անունից դատարանում ցուցմունք տալիս: Բացառություն էին կազմում այնպիսի դեպքերը, երբ կինը կնոջ կամ իր ամուսնու նկատմամբ էր ցուցմունք տալիս. նրան դեպքերում կնոջ ցուցմունքը ընդունվում էր:

Թեև Մխիթար Գոշը կնոջը վկա կանչելու հարցի նման լուծումը բացատրում էր նրանով, որ կանայք դուրագրգիռ են և հեշտ են թյուրիմացության մեջ լնկնում, սակայն իրականում նման մոտեցման պատճառը կնոջ նկատմամբ դոյություն ունեցող ընդհանուր հայացքներն էին: Այդ հանգամանքն ավելի ցայտուն կերպով է արտահայտվել Սմբատ Սպարապետի Դատաստանադրքում (հոդ. 78). տղամարդը գլուխն է, իսկ կինը՝ ոտները, ինչպես ոտները ենթարկվում են դիսին, այնպես էլ կինը՝ մարդուն²: Այդ իրավական նորմը նրա Դատաստանագրքի ղեկավար սկզբունքներից մեկն է և դրա հիման վրա շատ հարցեր հաճախ լուծվել են ի վնաս կնոջ, նրան տղամարդու հետ անհավասար դրության մեջ դնելով:

Այդպիսի պայմաններում պետական գործունեության մեջ այս կամ այն չափով մասնակցություն կարող էր ունենալ միմիայն ֆեոդալական բարձր խավին պատկանող կինը: Նման իրավունքից ամենից առաջ օգտվում էր թագուհին: Թագածառանգ համարվում էր տղան, իսկ եթե թագավորը արու զավակ չուներ, ապա թագավորում էր աղջիկը: Ժառանգությունը անցնում էր հայրական ղեռով, ուստի թագածառանգ կարող էր լինել նաև թագավորի եղբայրը³, Կալվածքի կառա-

¹ Մխիթար Գոշի Դատաստանագիրք Հայոց, 1880, էջ 36:

² Սմբատ Սպարապետ. Դատաստանագիրք, Երևան, 1958, էջ 54:

³ Նույն տեղում, էջ 5:

վարման գործում որոշ ֆունկցիա ունեն ֆեոդալի (նախարարի) կինը: Դա խիստ սահմանափակ իրավունք էր:

Քաղաքացիական իրավական պաշտպանությունը

Գույքային հարաբերություններում ժառանգման իրավունքը վճռական նշանակություն ունի, դրա շնորհիվ է, որ արտադրության հիմնական միջոցները մնում են մասնավոր սեփականության ոլորտում: Թեև ժառանգության պրոբլեմը ֆեոդալական յուրաքանչյուր դասակարգի, նույնիսկ ամեն մի խավի մոտ ունեն իր լուծման մի շարք առանձնահատկությունները, բայց կարելի է նշել ընդհանուր բնույթ կրող ձևերը:

Ժառանգական իրավունքը սահմանվում էր հայրական գծով, բայց ոչ երբեք մայրական: Նույնիսկ այն դեպքում, երբ կինը ժառանգարածին էր ստանում, դարձյալ ժառանգական իրավունքն ընթանում էր հայրական գծով, սյսինքն՝ ժառանգական իրավունքը կրողը ոչ թե կինն է, այլ միայն տղամարդը⁴: Այդ հանգամանքը նախատեսված է Մխիթար Գոշի Դատաստանագրքի 62, 63, 64, Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի 118, 119 և այլ հոդվածներում: Ամուսինների համատեղ կյանքի ընթացքում ձեռք բերած ընդհանուր սեփականությունը տղամարդ ամուսինը կարող էր ըստ իր ցանկության կտակել (Սմբատ Սպարապետ, Դատ., հոդված 145): Հետևաբար, ընդհանուր սեփականության իրավունքը տնօրինում էր տղամարդը, քանի որ կտակի առկայության դեպքում ժառանգման հարցը լուծվում էր բացառապես դրա հիման վրա: Տվյալ դեպքում տղամարդուն տալով նման արտոնություն, ամուսինները գրվել են աւհավասար դրության մեջ⁵:

Եթե կնոջ գույքը որոշակիորեն առանձնացված էր, ապա այն անցնում էր կնոջ ժառանգներին⁶: Երեխա ունենալու դեպքում ծնողների ամբողջ ունեցվածքն անցնում էր նրան: Հոր վրա էր դրվում մոր և երեխայի նկատմամբ հոգատարության պարտականությունը: Ամուսինների գույքի ժառանգման սկզբունքները շատ նման են միմյանց. ժառանգը տղան էր, եթե տղա չունեն, ապա աղջիկը, սակայն ժառանգությունը աղջկա գծով չի շարունակվում, այլ հայրական գծով: Կնոջ մաւրո, ցույրը ժառանգ չէին, ամուսնացած երկու քույրը բաժինամաս էին ստանում մի տղայի չափով: Մայրը մահանալու դեպքում նրա գույքը բաժանվում էր երկու հավասար մասի՝ մեկը հատկացվում էր երեխայի հորը, մյուսը՝ մոր հորը (պապին): Չբեր կնոջ գույքը ժառանգում էր նրա հայրը: Ամուսնուն էր հատկացվում կնոջ գույքի մեկ վեցերորդ մասը, որպես ամուսնական համատեղ կյանքի հարգանք⁷: Այն դեպքում, երբ տղամարդն ամուսնանում էր այնպիսի կնոջ հետ, որը երեխա չունեն, ապա կնոջ գույքի մեկ քառորդ մասն անցնում էր ամուսնուն⁸, Գույքաբաժանման ու ժառանգման հարցում Մխիթար Գոշի մոտ նկատվում է ամուսինների միջև հավասարություն հաստատելու միտում: Այս տեսակետից բնորոշ է Դատաստանագրքի II մասի 96 հոդվածը: Եթե աղջիկը չէր ամուսնանում, մնում էր տանը, ապա նա ստանում էր տղային հավասար բաժինամաս, իսկ ամուսնացած աղջիկը՝ նրա կեսի չափով, քանի որ ամուսնության ժամանակ նա տարել էր օժիտ՝ որպես բաժինամասի կեսը: Այս կերպ Մխիթարի կարծիքով հավասարություն էր հաստատվում: Թեև այդ բացատրությունը համոզեցուցիչ չէ, քանի որ կնոջ օժիտը Ե. մի չափով ապագա ժառանգության կեսը չէր կարող լինել՝ զանազան պատճառներով, սակայն նման ձգտումը բնորոշ էր:

Կինը ամուսնու տուն էր գնում հայրենական գույքի իր բաժինամասը տանելով, որը անցնում էր ամուսնու կարգադրության ներքո: Կնոջ մահվան դեպքում գույքը անցնում էր երեխային, իսկ երեխա չունենալու դեպքում վերադարձվում էր ծնողներին կամ եղբորը: Եղբայրները բաժանվելու ժամանակ պարտավոր էին առանձնացնել հարսի օժիտը, իսկ եթե օժիտը ծախսվել էր բոլորի կողմից, ապա այն վերականգնվում էր ընդհանուր գույքից⁹:

Ամուսնական և բնտանեկան իրավամեծերի և շահերի պաշտպանությունը

Քրիստոնեությունը պետական կրոն ճանաչվելուց հետո ամուսնության և բնտանեկան հարաբերությունների կարգավորումը անցել էր եկեղեցու ձեռքը: Վերջինս ըստ էության կնոջը ենթար-

4 Մխիթար Գոշ, նույն տեղում, էջ 370:

5 Սմբատ Սպարապետ, նույն տեղում, էջ 109:

6 Նույն տեղում, էջ 130:

7 Մխիթար Գոշ, նույն տեղում, էջ 377:

8 Նույն տեղում, էջ 403:

9 Նույն տեղում, էջ 432:

կում էր տղամարդու կամքին, հաճախ անհավասար դրուժյան մեջ դնելով կնոջն ու տղամարդուն, Միաժամանակ եկեղեցին որոշ առաջադիմական նորմեր էր սահմանում, պայքարում հին վատ սովորությունների դեմ, նույնիսկ առանձին հարցերում ձդտում կնոջ և տղամարդու իրավունքներում հավասարություն սահմանել:

Դեռևս V դարում եկեղեցական ժողովների սրողումներում առաջ է քաշվել ամուսնության կամավորության սկզբունքը. այդ հարցում տղայի և աղջկա համաձայնության անհրաժեշտությունը: Դա իր ժամանակին մեծ առաջադիմություն էր և կնոջ շահերի որոշակի պաշտպանություն: Ս. Սահակի (357—439) 27-րդ կանոնը արդելում էր տղային ու աղջկան իրենց կամքին հակառակ պսակելը, սահմանում էր, որ նրանք պիտի տեսնեն միմյանց և հավանեն, որից հետո միայն նրանց կարելի է պսակել: Այդ սկզբունքը պաշտպանել է Մ. Գոշի Դատ. I մասի 91-րդ հոդվածը: Նշված դրական նորմերը հաճախ իրենց զորակական նշանակությունը կորցնում էին եկեղեցական այլ նորմերի ուժով: Պսակի համար ծնողների համաձայնությունը պարտադիր էր (Բարսեղ Մեծի 42-րդ կանոն): Պոռնիկ էր համարվում այն կինը, որը առանց հոր համաձայնության (նույնի կանոն 38) կամ այն աղախինը, որ պարոնի կամքին հակառակ (կանոն 40) ամուսնանում էր: Շահապիվանի 447 թ. եկեղեցական ժողովը սահմանելով ամուսնության կամավորության սկզբունքը, միաժամանակ պարտադիր էր համարում հոր համաձայնությունը (կանոն 7): Մեծողների կողմից իրենց տղաների ու աղջիկների ամուսնության համար պարտադիր համաձայնություն սահմանելը փաստորեն խախտում էր կամավորության սկզբունքը, և այն մնում էր բարի ցանկություն: Եթե աղջիկն ու տղան տեսնելով միմյանց և հավանելով ցանկանում էին ամուսնանալ, իսկ հայրը համաձայն չէր, ապա դրանով իսկ նրանց ամուսնությունը բացառվում էր:

Կանոնական իրավունքը դրական քայլ է կատարել մերձավոր ազգականների ամուսնությունն արգելելով: Աշտիշատի 365 թ., Շահապիվանի 447 թ. և հետագա եկեղեցական ժողովները մերձավոր արյունակիցների միջև ամուսնությունն արգելել են, Եկեղեցին դրական պայքար է մղել նաև մանկահասակների ամուսնության դեմ: Ս. Սահակի (կանոն 28) և մյուսների կանոններով արգելվում էր ղեռահասների պսակը, պատասխանատվություն էր սահմանվում այն ծնողների ու քահանայի համար, ովքեր մանկահասակներին պսակում էին: Գոշի Դատաստանադրքի I մասի 5-րդ հոդ. նախատեսել էր ամուսնության այնպիսի հասակ, որ ամուսինը բոլոր կողմերով կարողանա տիրապետել կնոջը: Ամուսնացողները պետք է անպայման տեսնեն միմյանց: Կամավորության սկզբունքի պահպանությունը պարտադիր էր համարվում: Եթե նշանադրում էին ղեռահասներին, ապա նրանք չափահաս դառնալով կարող էին լուծել իրենց ամուսնության հարցը՝ որիչի հետ ամուսնանալ (հոդված 91):

Ամուսինների փոխհարաբերությունների իրավական կարգավորման բնագավառում կարևոր տեղ են դրավել նաև այլ հարցեր: Եկեղեցին հետևողականորեն պայքարել է մենամուսնության համար, ձգտելով արմատախիլ անել ամուսնական անհավատարմությունը:

Այդ շրջանում թեև ամուսնական անհավատարմությունը հաճախ կոչում են պոռնկություն, բայց այն մարմնավաճառության իմաստ չի ունեցել, Պոռնկությունն իր իսկական իմաստով կնոջն անարդելու միջոց է: Այս հարցում հայ իրավունքը կնոջ նկատմամբ ավելի խիստ պահանջկոտություն է ունեցել, քան տղամարդու, բայց էության տղամարդուն որոշ չափով արտոնություն է տրվել: Ամուսնական անհավատարմության դեպքում տղամարդը կարող էր բաժանվել կնոջից, իսկ կինը չէր կարող այդ հիման վրա թողնել ամուսնուն: Իրրև տույժ կինը կարող էր ամուսնու անհավատարմության դեպքում ժամանակավորապես հեռանալ նրանից¹⁰: Ամուսնական անհավատարմության պատճառով անախորժություն առաջանալու դեպքում հարցը լուծվում էր տղամարդու համար արտոնյալ պայմաններով. եթե տղամարդը չէր կարող տուն վերադառնալ և աշխատել, կնոջն ապահովել անհրաժեշտ միջոցներով, ապա այս դեպքում կինը կարող էր թողնել ամուսնուն իսկ եթե նա կնոջն ապահովում էր անհրաժեշտ ամեն ինչով, ապա կինը չէր կարող նրան թողնել, բայց կնոջ անհավատարմության դեպքում ամուսինը կարող էր թողնել նրան¹¹: Այն դեպքում, երբ որևէ մեկը նշանված աղջկանը խաբելով կենակցում էր նրա հետ, ապա պարտավոր էր նրան կին վերցնել. եթե աղջկա հայրը համաձայն չէր աղջկան նրան կին տալու, ապա նա պարտավոր էր աղջկա հորը վճարել գլխագինը, իսկ եթե տղան կամ նրա ազգականները չէին համաձայնվում ամուսնության, ապա գլխագինը վճարվում էր կրկնակի չափով: Բնորոշ է այն հանդամանքը, որ տուգանքը՝ գլխագինը, վճարվում էր ոչ թե տուժալ աղջկան, այլ նրա հորը:

¹⁰ Նույն տեղում, էջ 104:

¹¹ Ս մ ր ա տ Ս պ ա ր ա պ Ե տ. Նույն տեղում, էջ 88:

Այն դեպքում, երբ տղամարդը զրպարտում էր իր կնոջը նրա հետ վատ հարաբերության մեջ գտնվելու պատճառով, հայտարարելով, թե նա մինչև ամուսնությունը կորցրել էր իր կուսությունը, ապա պետք էր ստուգել դրա ճշտությունը. եթե իրոք զրպարտում էր, ապա պետք էր ճիպոտահարել և տուգանել ամուսնուն կնոջ օգտին, իսկ ամուսնալուծությունը ցմահ արգելել: Եթե այդ հայտարարությունը ճիշտ էր, ապա ըստ կանոնական իրավունքի կինը ենթակա էր մահվան: Դատաստանագրքերը նման դեպքերում սահմանում են ապահարզան, եթե ամուսինը չի կարող հանդուրժել և ապրել իր կնոջ հետ: Աղջկան պատժելու հարցը այս դեպքում Ս. Սպարապետը թողնում էր ծնողների հայեցողությանը, իսկ Մ. Գոշը խորհուրդ էր տալիս այդ մասին շհրապարակել, քանի որ աղջիկը զանազան պայմաններում կարող էր սխալվել (Մ. Գոշ, Դատ., I մաս, հոդ. 21 և Ս. Սպարապետ, Դատ., հոդ. 86):

Ամուսնալուծության հարցը

Ամուսնալուծության հարցը ըստ էության կնոջ ազատության և իրավական վիճակի փաստական դրությունը բնութագրող հարցն է: Առանց ամուսնալուծության իրավունքի ամուսինների հավասարությունը չի կարող ապահովվել: Իրեն կանոն կինը գտնվում էր տղամարդու իշխանության ներքո: Տղամարդն ապահարզանի ավելի լայն իրավունք ուներ, քան կինը: Դրա հետ միասին նկատվում էր ապահարզանի իրավունքների հարցում տղամարդու և կնոջ իրավունքների հավասարեցման ձգտում: Ապահարզանի օրինական հիմքերի սահմանումը սկսվել է V դարից և զգալի չափով ընդլայնվել է Մ. Գոշի Դատաստանագրքում: Այն դեպքում, երբ տղամարդը շնաբար էր և ուրիշ կնոջ վրա աչք ունենալով արձակում էր իր կնոջն առանց ամուսնական անհավատարմության կամ մարմնական լարտի, պարտավոր էր ամեն բան՝ հող, ջուր, տուն և այլն հավասար կիսել կնոջ հետ: Կինը կարող էր ուրիշի հետ ամուսնանալ, սակայն այն պայմանով, որ իր բաժինամասը հատկացներ արքայական զանձարանին: Տղամարդ ամուսինը պարտավոր էր 7 տարի սպասել և եկեղեցուն տուգանք վճարել: Ընդ որում, եթե մինչև մեկ տարին լրանալը ուրիշ կին համարձակվեր նրա հետ ամուսնանալ, ապա ուրեմն նա էր եղել ապահարզանի պատճառ, ուստի պետք էր նրան բռնել և ուղարկել ուրկանոց՝ մի տարի ցորեն աղալու, իսկ եթե այդ կինը ազատներից էր, ապա նրան այդ պատժի փոխարեն տուգանում էին: Այդ պատժը նպատակ է ունեցել ահաբեկել կանանց և արգելք հանդիսանալ նման տղամարդու նոր պսակին:

Այն դեպքում, երբ տղամարդը «դիվոտ» էր և ստոր, նեղում էր կնոջը, չապահովելով անհրաժեշտով, ապա կինը պիտի համբերեր 7 տարի, որի ընթացքում նրա ծնողները փեսային դիտողություններ էին անում և պահանջում պահել կնոջը կանոնավոր կամ բաժանվել նրանից: Եթե կինն էր մեղավոր, ապա նա էր ենթակա պատժի: Այն դեպքում, երբ կինը առանց օրինական հիմքի թողնում էր ամուսնուն, ապա հանձնվում էր ամուսնուն հավերժ ստրկության: Եթե թողնելու մեղքը տղամարդունն էր, ապա դատարանով և եկեղեցով պետք էր լավ խրատել: Ըստ որում, եթե փախչելուց հետո կինը ուրիշի հետ մեղանչել էր, ապա ամուսինը կարող էր թողնել նրան¹²:

Ամուսնական հարաբերությունները կարգավորելու ժամանակ հաշվի էին առնում մեղավորության սկզբունքը, անկեղծությունը, ազնվությունը և այլ հանգամանքներ: Ահա դրանցից մի քանիսը. եթե ամուսինը տառապում էր այնպիսի հիվանդությամբ, որ նրան զրկում էր ամուսնական պարտականությունները կատարելու հնարավորությունից, սակայն ամուսնության ժամանակ այդ հանգամանքը թաքցրել էր, ապա կինը կարող էր թողնել նրան: Այդ դեպքում կինը կարող էր վերցնել նրա զույգի կեսը և ուրիշի հետ ամուսնանալ, իսկ մարդը պիտի երեք տարի ապաշխարեր¹³: Ամուսիններից մեկը դիվոտ լինելու դեպքում հարցը լուծվում էր ելնելով այն բանից, թե մինչև ամուսնությունն էր առաջացել, թե ամուսնության ընթացքում, հիվանդ ամուսինը մյուսին այդ մասին մինչև պսակվելը հայտնե՞լ էր, թե թաքցրել նրանից: Թաքցրած լինելու դեպքում կարող էր բաժանվել, իսկ եթե չի թաքցրել ապահարզան չէր տրվում: Եթե հիվանդությունը ամուսնական կյանքի ընթացքում էր առաջացել, ապա ամուսինը պարտավոր էր համբերել 7 տարի¹⁴: Կնոջ շահերի պաշտպանություն էր այն նորմը, որի համաձայն կնոջ հաշմանդամ դառնալու դեպքում ամուսինը պարտավոր էր նրան ցմահ ապահովել, որից հետո ամուսնանալ ուրիշի հետ¹⁵: Հասկանալի է, որ այդպիսի հնարավորություն կարող էր ունենալ հարուստ մարդը միայն:

¹² Նույն տեղում, էջ 105:

¹³ Նույն տեղում, էջ 101:

¹⁴ Նույն տեղում, էջ 85:

¹⁵ Նույն տեղում, էջ 102:

Քրեական իրավական պաշտպանություն

Կնոջ ազատության, կյանքի, առողջության, պատվի ու արժանապատվության քրեական իրավական պաշտպանությունը հիմնականում տեղի է ունենում սպանության, մարմնական վնասվածքներ պատճառելու, վիժման ու արորտի, բռնաբարության, առևտնգման դեմ մղվող պայքարի միտցով: Թեև հանցագործության հասկացությունը որոշելիս ելակետ են ընդունվել կրոնական դոգմաները, սակայն իրավական միտքը բավականին զարգացած է եղել և խորն ըմբռնողություն ունեցել, այն հիմնական գծերով ճիշտ է լուսարանել հանցագործության հասկացությունը և պատասխանատվությունը, որի հիման վրա էլ սահմանվել են անհրաժեշտ պատիժներ: Համառոտ կերպով քննարկենք քրեական պաշտպանության հարցերը:

Ա. Սպանություն

Սպանությունն ուրիշին կյանքից անօրինական կերպով զրկելն է, որի շարժառիթները և նպատակները տարբեր են լինում: Դրանք ստորաբաժանվում են՝ դիտավորյալ սպանություն (իր ստորաբաժանումներով), անզգույշ և պատահական սպանություն: Մարդը ազատ կամք ունի և ինքն-իշխան է. նա կազմված է մարմնից ու հոգուց, սին է աշխարհը, հողին՝ հավերժ: Մարմնի վրա իշխում է սատանան և օգտվելով նրանից, որ մարդու կամքը թույլ է, զրգում է մեղանշելու, հանցանք կատարելու: Չարագործությունը հարաբերական է. երբ սպանում են շարին, ապա դա բարի է, իսկ երբ անմեղին են սպանում, ապա դա շարագործություն է: Մարդու անձնիշխանությունն անցնում է ժառանգաբար: Սակայն անձնիշխանությունը բացարձակ չէ, այն սահմանափակվում է աստծու պատվիրաններով՝ բարոյական նորմաներով: Եթե շարիքը բնական լիներ, ապա պիտի բուժվեր և ոչ թե պատժվեր: Այս դեկավար սկզբունքի վրա էին կանգնած թե՛ կանոնական իրավունքը և թե՛ դատաստանագրքերը (Մխ. Գոշի Դատաստանագիրք, Նախադրություն, գլուխ 1, 2, 3): Սակայն Գոշը շատ ղեկավարում կանգնում էր մեղքի անհատականացման տեսակետի վրա: Նա տեսնում էր բնական և օրինական հիմքեր. եկեղեցական կանոնները նա համարում էր հոգու, իսկ Դատաստանագիրքը՝ մարմնի ուղղելու միջոց, որոնք չեն ձուլվում, բայց և չեն բաժանվում, շատ ղեկավարում էլ համընկնում են: Անհատականացման սկզբունքը քրիստոնեությունը շատ առաջ էր ընդունել՝ «Ամեն ոք պիտի պատժվի իր կատարած հանցանքի և կատարած մեղքի չափով» (Երկրորդ սրինաց, ԻԴ, 16): Քրիստոնեությունը հանցագործությունը համարում է աստծու անխախտ պատվիրանի կամայական խախտում, իսկ պատիժը հատուցումն է այդ խախտման դիմաց¹⁶: Թեև իրավական միտքը ընդունել էր պատասխանատվության անհատականացման սկզբունքը, սակայն զրանից չեղվելու հնարավորությունը չէր բացառված: Օրինակ, խիստ պատիժ սահմանելով հայրենիքի դավաճանների և պետական զանձարանից զոգություն կատարողների նկատմամբ, միաժամանակ իրավունք էր վերապահվել նրանց կանանց և երեխաներին վերցնել ստրկության կամ վաճառելու: Դա նշանակում է, որ տվյալ ժամանակաշրջանում նման հանցագործությունները տարածված են եղել և լուրջ վտանգ են կալայացրել, իսկ բնական լինելու պատժելի դիտվել է իրեն պայքարի արդյունավետությունը բարձրացնելու միջոցներից մեկը:

Իրավական միտքը սպանությունները բաժանել է երեք խմբի՝ ակամա (ոչ դիտավորյալ), կամավոր (դիտավորյալ) և խառն: Ըստ Գոշի ակամա սպանություն է, երբ կեսուրը ուղղելու նպատակով հաբսին այնքան է ծեծում, որ նա մահանում է: Դա ցույց է տալիս, որ տվյալ ժամանակաշրջանում կեսուրը հարսին ծեծելու իրավունք է ունեցել և դրա համար պատասխանատվություն չի կրել: պատասխանատվության է ենթարկվել այն ղեկավար, եթե ծեծի հետևանքով մահ է առաջացել: Տերը՝ պարոնը, ծառային կամ աղախնին այնքան է ծեծում, որ ուժից վեր է լինում և մահանում է: Նշանակում է, որ տերը՝ պարոնը, աղախնին «խրատելու», այսինքն՝ ծեծելու իրավունք է ունեցել և պատասխանատվություն միայն այն ղեկավար է առաջացել, երբ մահ կամ մարմնական ծանր վնասվածք է պատճառվել: Տվյալ ղեկավար Գոշը չփոթել է սպանությունը և մարմնական ծանր վնասվածքի հետևանքով մահ առաջանալու:

Պայքարելով սպանությունների դեմ, զրանով իսկ պաշտպանում էին նաև կնոջ կյանքը: Կնոջ անհավատարմության ղեկավարում ամուսինը կարող էր բաժանվել նրանից, բայց նրան սպանելու իրավունք չուներ: Եթե տղամարդն իր կնոջը սպանում էր իր շար բնավորության հետևանքով, ապա ենթակա էր երկակի պատժի: Նույնպիսի պատժի ենթակա էր կինը, եթե սպանում էր ամուս-

¹⁶ Տե՛ս Ա. Թ. Թ. ով մասյան, Հին և միջնադարյան հայ քրեական իրավունք, Երևան, 1962, էջ 231:

նույնիսկ նման սպանությունների դեպքում պահանջվում էր մանրամասն կերպով ստուգել և պարզել մարդասպանի և տուժողի կյանքի պայմանները՝ ապրելակերպը, եթե կինն անհավատարմությունը կատարել էր թեթևամտության կամ տանջալից պահանջի պատճառով կամ ամուսինը եղել է այլապես դրսև, որի հետևանքով էլ կինը նման քայլ էր կատարել, ապա մարդասպանին պիտի պատժեն իրեն մեծ եղեռնադործի և վերցնեին արյան գինը: Եթե այդ բոլորը չկա, ամուսինը կնոջը լավ է պահել և ամեն ինչ բավական է եղել, կինն անառակություն է արել և շուայել է ունեցվածքը, որի համար էլ ամուսինը սպանել է նրան, ապա պատիժը պիտի մեղմ լինի¹⁸: Տվյալ դեպքում նկատի էր առնվում պատասխանատվությունը խստացնող և մեղմացնող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: Այն դեպքում, երբ կինն սպանում էր իր մարդուն կամ սիրեկանի միջոցով սպանել տալիս, ապա կնոջը պետք էր մահապատժի ենթարկել, չէր կարելի ներողամտ լինել, քանի որ նման դեպքում դա վատ օրինակ է ծառայել և չատ կանայք կսպանեն իրենց ամուսիններին: Երբ ամուսինը կնոջը բռնում է սիրեկանի մոտ և երկուսին էլ սպանում, ապա աշխարհիկ դատարանին ենթակա չէր, եթե մեկին էր սպանում, ապա ենթակա էր մարդասպանի պատժին: Նման մոտեցումը բացատրվում էր նրանով, որ տվյալ դեպքը կարող էր արհեստակա նորեն կազմակերպված լինել վրեժի նպատակով կամ կնոջից ազատվելու համար¹⁹: Դավիթ Ալավկա որդու ՀԹ կանոնը սահմանել է, որ քահանան պիտի կույսի հետ ամուսնանա, եթե աղջիկը կույս չի լինում, ապա նրան չպետք է մյուսների նման բարկոծելով սպանել, այլ կրակով այրել իրեն օրինակ դեհենի: Այն դեպքում, երբ կինը ճանապարհին ծնված երեխան ձգում է, ապա պիտի պատժել որպես մարդասպանի (Բարսեղ Մեծ, կանոն 52): Երբ ծնողները երեխային կամ մարդը կնոջը խնամքով են խրատում (ծեծում), բայց մահ է առաջանում, ենթակա է պատժի, իսկ եթե զազանարար է խրատում և մահացնում, ապա ավելի խիստ պատժի է ենթարկվում: Նույնպես խիստ պատժի է ենթարկվում կինը, եթե թունավորում է ամուսնուն (Դավիթ Ալավկա որդի, կանոն 54): Այստեղից հետևում է, որ մարդը կնոջը ծեծելու իրավունք է ունեցել և պատժի է ենթարկվել ծեծի հետևանքով մահ առաջանալու դեպքում: Երեխային խեղդելու դեպքում, եթե դրա նպատակն է ազատ լինել պոռնկությանը դրադելու համար, սահմանվում էր մահապատժի:

Բ. Մարմնական վնասվածի պատճառում

Օրենսդրությունը լուրջ ուշադրություն է դարձրել կնոջը մարմնական ծանր վնասվածքներ պատճառելու դեմ պայքարի հարցին: Այն դեպքում, երբ մարդն իր շար բնավորության հետևանքով ջարդում էր կնոջ ձեռքը կամ ոտը, կամ հանում աչքը, կամ ատամը, կամ նրան անդամահատում էր, ապա նրան պետք է պատժեն ինչպես օտարին են պատժում նման դեպքերում, սակայն պատժաչափը պիտի լիներ կրկնակի, որպեսզի մարդը հասկանար, որ կինը իր մարմնի կեսն է և ոչ թե հարճը: տուգանքը զանգվում էր հօդուտ տուժողի: Եթե մարդը համառ էր և այդ բոլորից հետո կնոջ կյանքին վտանգ էր սպառնում, ապա թույլ էր տրվում ամուսնալուծություն՝ որպես կնոջ կյանքի փրկման միջոց²⁰:

Գ. Վիժում և արուեստ

Ֆեոդալական Հայաստանում հղի կնոջ վիժումը և արուեստը դիտվել է որպես խիստ վտանգավոր հանցագործություններից մեկը: Իսկ ընդ Մեծի 2-րդ կանոնը սահմանել է, որ գիտակցաբար արգանդի պտուղը ոչնչացնելը, անկախ նրա զարգացման աստիճանից, ենթարկվում է մարդասպանի պատժին: Ընդ որում այդ գործում մեղավոր կինը պատժվում էր ոչ միայն պտուղը ոչնչացնելու, այլև իր կյանքը վտանգի ենթարկելու համար: Դավիթ Ալավկա որդու ԽԸ կանոնը պատիժ էր նախատեսում ոչ միայն իր արգանդում պտուղը ոչնչացնող կնոջ համար, այլև զրգողների, օժանդակողների և իմացող շահյալողների համար: Վերջինս նոր հասկացություն էր, որ մուտք էր գործում օրենսդրության մեջ: Խիստ պատասխանատվություն էր սահմանվում հղի կնոջը հարվածելու և վիժում առաջացնելու համար: Սակայն դատաստանագրքերն այս հարցում ավելի առաջ են ընթանում և ճշտում են հարցը. պատասխանատվության հարցը որոշելիս ելակետ են ընդունում պտղի զարգացման աստիճանը՝ ձևավորված լինելը կամ չլինելը: Եթե պտուղը դեռևս

¹⁷ Մխիթար Գոշ, նույն տեղում, էջ 115:

¹⁸ Սմբատ Սպարապետ, Դատ., էջ 93:

¹⁹ Նույն տեղում, էջ 94:

²⁰ Մխիթար Գոշ, նույն տեղում, էջ 111:

ձևավորված չի եղել, ապա հանցավորը վճարում էր տարյան դեռ կեսը և ապաշխարում, իսկ եթե երեխան արդեն ձևավորված է եղել, ապա կյանքի դիմաց՝ կյանք: Այդ սկզբունքը պահպանում է Սմբատ Սպարապետը, իսկ Մխիթար Գոշը փոխարինում է տուգանքով և ապաշխարանքով²¹:

Գ. Բռնարարություն

Բռնարարությունը համարվում է կնոջ կամքին հակառակ նրա հետ սեռական հարաբերությունը: Ֆեոդալական Հայաստանում բռնարարությունը համարվել է վտանգավոր հանցագործություններից մեկը: Սակայն այս շրջանում բռնարարությունը շատ հաճախ կապվում էր կնոջ առևժանգման, ամուսնությունից առաջ կուսությունը կորցնելու և այլ հանգամանքների հետ: Եթե կույսին առևանգողը ծածուկ կամ բռնությունով խախտում է աղջկա կուսությունը, ապա անառակների պատժին էր դատապարտվում (Բարսեղ Մեծ. Կանոն 22): Ամուսնությունից առաջ նշանածի կամ օտարի կողմից նշանված աղջկա կամքին հակառակ կուսության խախտման դեպքում աղջկան վերադարձնում էին ծնողներին, առևանգողը տուգանվում էր, տուգանվում էին նաև առևանգմանը օժանդակողները:

Մխիթար Գոշի և Սմբատ Սպարապետի դատաստանագրքերում զգալի տարբերություններ են նախատեսվում բռնարարության վերաբերյալ սահմանված պատիժների միջև: Չնշանված աղջկա բռնարարության համար պատիժը նույնն է, ինչ որ կնոջ բռնարարության համար է նախատեսված, ըստ Մովսիսական օրենքների, բռնարարողը պետք է աղջկա հորը վճարեր 52 արծաթե դրախտ, իսկ տուժողին ցմահ կին վերցնեի: Դատաստանագիրքը հետևյալ կերպ է լուծում հարցը՝ հանցավորը ամուսնանում է տուժողի հետ առանց օժիտի և անբաժանելի ամուսնությամբ, եթե նա այդ չի ցանկանում, ապա պետք է վճարի այն, ինչ որ նախատեսված է բռնարարության համար²²: Այն դեպքում, երբ տղամարդը կնոջը տանում է ուրիշի տուն և բռնարարում, ապա ենթակա է մահապատժի կամ պետք է կտրել նրա սեռական անդամը: Եթե կինն է նրան կանչել, ապա ենթակա է մարմնական պատժի և տուգանքի, կամ ամուսնու համաձայնության դեպքում՝ քիթը կտրելու: Այն դեպքում, երբ տղամարդը մերկացվում է անասնամուկության մեջ, ապա որպես պատիժ սահմանվում էր կտրել նրա սեռական օրգանները և իրեն ուղարկել եկեղեցի՝ ցմահ ապաշխարանքի, Կույսին առևանգելու և բռնարարելու դեպքում պատասխանատվությունը սահմանվում էր ելնելով այն բանից, թե նա նշանված է, թե ոչ: Եթե նշանված էր, ապա պատիժը նույնն էր, ինչ որ կնոջ բռնարարության համար էր սահմանված (հոդ. 94): Եթե նշանված չէր, ապա հանցավորին պարտավորեցնում էին տուժողի հորը վճարել մեծ տուգանք և ամուսնանալ տուժողի հետ, հակառակ դեպքում, եթե չի ամուսնանում, կտրել սեռական անդամը:

Այն դեպքում, երբ բռնարարում էին չքավոր աղջկան, ապա հարցը քննում և լուծում էր պարոնը, ըստ որում, եթե հարկադրաբար է տեղի ունեցել արարքը, ապա սահմանվում էր հանցավորին խեղանդամել, իսկ կամավորության դեպքում՝ ներողամիտ լինել: Եթե աղջկան առևանգում էին և հետո ամուսնանում, ապա նրանց երեխաները համարվում էին ոչ օրինածին, իսկ բռնարարվելու դեպքում աղջկան վերադարձնում էին ծնողներին, իսկ հանցավորի սեռական օրգանները լրիվ կտրում²³: Երբ պարոնը բռնարարում էր աղջկան, ապա նա պատասխանատվության չէր ենթարկվում, իսկ տուժողը ազատվում էր պատժից, քանի որ կուսությունը կորցրել էր իր կամքից անկախ:

Այսպիսով՝ միջնադարյան հայ իրավունքում, շեշտված դասակարգային մոտեցմամբ հանդերձ, դրական, առաջադիմական քայլեր են կատարվել կնոջ ազատության, կյանքի, առողջության, պատվի ու արժանապատվության պաշտպանության հարցերում և, ինչպես երևաց մեր քննությունից, ստեղծվել են մի շարք իրավանորմեր՝ ուղղված ամուսնական ու ընտանեկան հարաբերություններում կնոջ ստրկական վիճակի թվում:

21 Նույն տեղում, էջ 128:

22 Մխիթար Գոշ, Նույն տեղում, էջ 117:

23 Սմբատ Սպարապետ, Նույն տեղում, էջ 103, 96, 97: